

Թշնամական յարաբերութիւնները, ի գործ կը դրուին էլազասիի հաճութեամբ ելեաքի արջանային կենցաղին մէջ. իսկ Աշիրաթական համայնական կառավարութեան համար՝ ունին իրենց առանձին պարտականութիւններն ու իրաւունքները էլ Ադասիի միջոցաւ Աշիրաթապետի հետ :

Աշիրաթապետը Աշիրաթական Համայնական կառավարութեան գլխաւոր կ'անցնի էլ-աղասիներու ընտրութեամբ, այսինքն անոնց համախորհրդակցութեամբ ու համագործակցութեամբ : Արդէն այս ատիճանի վրայ է որ կը դադրի իրենց ցեղականութեան ու ցեղական կառավարութեան սահմանը, և չի թեւակոխեր Ազգութեան շրջանը, որովհետեւ կայ ցեղային աւանդական հակաւակութիւն ու թշնամութիւն. աղգութիւն կազմելու քայլը կը լինի Աօիրաթութեանց դաճակցութիւնը, որուն փորձերը միայն եղան երգական լիգա անունով, որ մնաց լոկ անուն ու գազափար միայն :

ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ ՄԸ

Հայտարանցիներու և ձէլայցիներու ցեղական կոիւններու ու յափշտակութեանց ժամանակն է. մենք կը գտնուինք Հայտարանցուց ցեղապետական վրանի տակ. մի՞նչու՞ն պէս լեւրանց բարձունքներու վրայ՝ իրենց սահմաններու որոշ տեղերը գիշերային պահապաններ կանգնած, իրար ձայն տալով հսկողութիւնը կը հաղորդէին միմեանց, ձայնը ձայնի տրուելով շրջան կ'առնէր ու կ'երթար հասնելու նախկին ձայն արձակողին, ձայնը սրձագանք կուտար ամբողջ հովտին մէջ՝ ուր փռուած էին ցեղի հարիւրաւոր սև սև վրանները. աղոնց կեղրոնը առանձին փայլով կը բարձրանար ցեղապետ Մ.ի կապոյտ վրանը իր զանազան բաժանմունքներով. ասոնք յարձակուելով ձէլայի ցեղի վրայ, յափշտակեր բերեր էին անոնց տաւարն ու ոչխարը, և կը հսկէին որ չը լինի թէ թշնամին